ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՑԻ ԳԱՐՈՒՆԸ.

Բացուեց գարունը, երկիր կանաչեց.
Համայն բնութիւն շքեղ զարդարուեց.
Մեր երկիրը հիւր կռունկն եկաւ,
Իւր կռկռոցով աշխարհը լցրեց.
Իսկ ես աստ օտար
Հեծեմ վշտահար.

Ամբողջ ցորեկը բեռը շալակիս
Շուկայից շուկայ ես պտտումեմ.
Դիշերն անհանգիստ՝ գլուխս չոր գետնին՝
Դառն երազներում տանջվում մաշվումեմ.
Այստեղ կարեկից
Չունիմ վշտակից.

Հեռու իմ ծնողք, կին ու զաւակներ
Ճամբաս կպահեն երկար տարիներ.
Մի քանի շահի որ վաստակելով
Գնամ սփոփել նոցա դառն օրեր,
Որոնք զօրն ի բուն
Ինձ են սպասում.

Անցան ամիսներ, հիւանդ ընկած եմ,
Ընտանեացս տեսոյն կարօտ կհեծեմ.
Ես աստ կենսամաշ, անդ նոքա անտէր.
Ո՞վ կխնամէ այն անմեղ գառներ.
Ա՜խ այս գարունն ինձ
Դառն է անցեալից.

Թէ ինձ կլսէք, ո՛վ հայ եղբայրներ,
Երբէք չէք բաժանուիլ ձեր հայրենիքէն.
Հայրենիքի մէջ վաստակած չոր հաց
Հատ ու շատ քաղցր է քան թէ օտարաց
Երկրում ձեռք բերած
Բաղդն ու անբաւ գանձ.

ՍԷԹ.

ՆԱՄԱԿ ԱԳ-ԲԻՐՄԱՆԻՑ

«Ինչպէս անցեալ տարի Ագբիրմանիս Հայ հասարակութիւնը ի ներկայութեան վիճակիս Դեր. Առաջնորդ Հօր փութաց իր երկսեռ ծխական դպրոցի հոգաբարձու Պ. Ծերօն Աստուածատրեանի 30 ամեայ՝ անընդհատ սոյն պաշտօնավարութեան համար իր շնորհակալեաց քուէն տալ,